

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐ**

ՄԿԾ-ի անվանումը և մասնագիտության դասիչը	Ծրագրային ճարտարագիտություն 061102.00.7
ՈԱՇ-ի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ (մագիստրոս)
Որակավորման աստիճան	Ինֆորմատիկայի մագիստրոս
Բուհը	Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան
Արտոնագրում	Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա N 2081 Ա/2, հաստատված 20.12.2021թ. նախարարի հրամանով), մասնագիտության ծածկագիրն է՝ 061102.00.7:
Ֆակուլտետը	Բնական գիտությունների ֆակուլտետ
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ուսուցման ձևը	Առկա
Ուսուցման տևողությունը	«Ծրագրային ճարտարագիտություն» մասնագիտության մագիստրոսի «Ծրագրային ճարտարագիտություն» կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը ուսուցման առկա ձևում մեկ ու կես տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 90 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ):
ՄԿԾ-ի մուտքի պայմանները	Ընդունելությունը մագիստրոսի ՄԿԾ-ով իրականացվում է համաձայն «Կարգ ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» ՀՀ ԿԳՆ (ԿԳՄՍՆ) 06 դեկտեմբերի 2007թ N 1193-Ն հրամանի):
ՄԿԾ-ի նպատակը	<p>ՄԿԾ-ն նպատակաուղղված է ծրագրային ապահովման արդյունաբերական արտադրության, տեղակատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի բնագավառում բարձր որակավորում ունեցող մասնագետների պատրաստմանը, որոնք հիմնարար մասնագիտական գիտելիքներ կունենան և կկարողանան դրանք կիրառել բարձրագույն կրթության, գիտության, ծրագրային ապահովման մշակման, ներդրման, շահագործման, ուղեկցման, ծրագրային նախագծերի դեպարման համար:</p> <p>Ծրագրի նպատակն է ուսանողներին տրամադրել.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. ծրագրային ապահովման մշակման ժամանակակից մեթոդների և գործիքակազմի վերաբերյալ գիտելիք և իմացություն,</li> <li>2. ծրագրային նախագծերի մշակման, որակի ապահովման և կառավարման համար անհրաժեշտ գործնական մասնագիտական հմտություններ,</li> <li>3. ինքնություն հետազոտություն կատարելու համար պահանջվող կարողություններ:</li> </ol> <p>Մասնագիտական գործունեության օբյեկտներն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ծրագրային ապահովում (ստեղծվող ծրագրային ապահովում),</li> <li>✓ ծրագրային ապահովման մշակման մեթոդներ և գործիքակազմ,</li> <li>✓ ծրագրային ապահովման կենսական ցիկլի գործընթացներ և գործընթացներում ներգրավված անձնակազմ,</li> <li>✓ ծրագրային նախագիծ (ծրագրային ապահովման մշակման նախագիծ):</li> </ul>

ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները	ՄԿԾ-ի ավարտին մագիստրատուրայի ուսանողը պետք է. Գիտենա՝
------------------------------------	---

	<ul style="list-style-type: none"> <li>✓ գիտական հետազոտությունների հիմնական տրամաբանական մեթոդներն ու եղանակները, ժամանակակից գիտության մեթոդաբանական տեսությունները և սկզբունքները,</li> <li>✓ ծրագրային ճարտարագիտության համակարգային հիմունքները,</li> <li>✓ ծրագրային ապահովման մշակման ժամանակակից տեխնոլոգիաները, կենսական ցիկլի ռեսուրսների պլանավորման և կառավարման մեթոդները, որակի դեկավարման փուլերն ու սկզբունքները,</li> <li>✓ ծրագրային նախագծերի կառավարման մոդելները և գործընթացները:</li> </ul> <p>Կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ պլանավորել, կազմակերպել և իրականացնել հետազոտություններ մասնագիտական գործունեության ոլորտներում,</li> <li>✓ մշակել որակյալ ծրագրային ապահովում՝ հիմնվելով ժամանակակից տիպային, բնորոշ ծրագրային լուծումների վրա,</li> <li>✓ ծրագրային ապահովման ուղեկցման և զարգացման համար ընտրել առավել արդյունավետ տեխնիկական և տնտեսական մոդելներ,</li> <li>✓ կառավարել ծրագրային նախագծերը:</li> </ul> <p>Տիրապետի՝</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ գիտահետազոտական, կազմակերպչական և կառավարչական ինքնուրույն գործունեության հմտություններին,</li> <li>✓ մասնագիտական գործունեության օբյեկտների նախագծման և կառավարման տեխնոլոգիաներին, որակի ապահովման մեթոդներին:</li> </ul>
<p>ՄԿԾ-ի յուրացման արդյունքում ձեռք բերվող կոմպետենցիաներ (առաջնորդվել ՎՊՀ «Առարկայական նկարագրի մշակման ռազմավարություն» փաստաթղթով)</p>	<p>«Ծրագրային ճարտարագիտություն» մասնագիտության մագիստրոսի որակավորում ստացած շրջանավարտը ձեռք կբերի.</p> <p>Ընդհանրական կոմպետենցիաներ (այսուհետև ԸԿ)</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ մասնագիտական, ներառյալ գիտահետազոտական, գործունեություն իրականացնելու կարողություն, նաև միջազգային միջավայրում(ԸԿ1),</li> <li>✓ մասնագիտական գործունեության ընթացքում տեղեկատվությունը վերլուծելու, ստուգելու, ամբողջականությունը գնահատելու կարողություն (ԸԿ2),</li> <li>✓ ինքնուրույն և թիմում աշխատելու, թիմային աշխատանքը կազմակերպելու, դեկավարելու՝ կառավարչական որոշումներ ընդունելու և նրանց համար պատասխանատվություն կրելու, կարողություն (ԸԿ3):</li> </ul> <p>Ընդհանուր մասնագիտական կոմպետենցիաներ (այսուհետև ԸՄԿ)</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ոչ ստանդարտ խնդիրները լուծելու համար, ներառյալ նոր առարկայական ոլորտում և միջառարկայական նախագծում, մաթեմատիկական, բնագիտական և մասնագիտական գիտելիքները ինքնուրույն ձեռք բերելու, խորացնելու և գործնականում կիրառելու կարողություն (ԸՄԿ1),</li> <li>✓ մասնագիտական խնդիրները լուծելու համար յուրօրինակ ալգորիթմներ և ծրագրային միջոցներ մշակելու կարողություն՝ ժամանակակից ինտելեկտուալ տեխնոլոգիաների կրառամբ (ԸՄԿ2),</li> <li>✓ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների միջոցով տեղեկատվություն</li> </ul>

	<p>ստանալու, պահպանելու, մշակելու և հեռարձակելու մեթոդների և միջոցների կիրառման կարողություն (ՇՄԿ3):</p> <p>Մասնագիտական կոմպետենցիաներ (այսուհետև ՄԿ)</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ տեխնիկական առաջադրանքը մշակելու և նախագծի տեխնիկատնտեսական հիմնավորումը իրականացնելու կարողություն (ՄԿ1),</li> <li>✓ ծրագրավորման ապահովման մշակման համար ժամանակակից տեխնոլոգիաները կիրառելու և որակը վերահսկելու կարողություն (ՄԿ2),</li> <li>✓ ծրագրային ապահովման ուղեկցման և զարգացման առավել արդյունավետ տեխնիկական և տնտեսական մոդելներն ընտրելու կարողություն (ՄԿ3),</li> <li>✓ ծրագրային նախագծի թիմի աշխատանքը կազմակերպելու, պատվիրատուի և ենթակապալառուների հետ համագործակցությունն իրականացնելու կարողություն (ՄԿ4),</li> <li>✓ ծրագրային նախագիծը ղեկավարելու՝ դժվարության ու ռիսկերի աստիճանները, բյուջեն և ժամանակը գնահատելու, աշխատանքային գրաֆիկը վերահսկելու, կարողություն (ՄԿ5):</li> </ul>
<p>Ուսուցման և դասավանդման մոտեցումները</p>	<p>Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ դասախոսություններ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով),</li> <li>✓ գործնական պարապմունքներ, սեմինարներ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով),</li> <li>✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, նախագիծ, գործարար խաղեր և այլն),</li> <li>✓ կուրսային աշխատանք, մագիստրոսական թեզ,</li> <li>✓ գիտահետազոտական և տեխնոլոգիական պրակտիկաներ:</li> </ul>
<p>Գիտելիքների գնահատման մեթոդները</p>	<p>Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ:</p> <p>Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը՝ հետևյալ բաղադրիչների գնահատմամբ և հաշվառմամբ.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան,</li> <li>✓ ինքնուրույն կատարվող աշխատանքներ,</li> <li>✓ գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքներին ուսանողի մասնակցություն,</li> <li>✓ նրա կողմից դրսևորած ակտիվությունը, հմտությունները և կարողությունները, ընթացիկ և ամփոփիչ քննություններ կամ ստուգումներ:</li> </ul>
<p>Մասնագիտական գործունեության ոլորտները.</p>	<p>«Ծրագրային ճարտարագիտություն» մասնագիտությամբ մագիստրոսը բուն ավարտելուց հետո կարող է աշխատել.</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ SS ընկերություններում սիստեմային վերլուծաբան,</li> <li>✓ SS ընկերություններում ծրագրային ապահովման նախագծող, ծրագրային ապահովման որակի մասնագետ, ծրագրային ապահովման անվտանգության ապահովման մասնագետ,</li> <li>✓ տարբեր բնագավառների ընկերություններում ծրագրային</li> </ul>

	<p>ճարտարագետ, տեղեկատվական անվտանգության մասնագետ,</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ ծրագրային ապահովման արդյունաբերական արտադրության, ներդրման, շահագործման, ուղեկցման հետ կապված նախագծերի ղեկավար:</li> </ul>
<p>Հետագա ուսման հնարավորությունները</p>	<p>«Ծրագրային ճարտարագիտություն» մասնագիտությամբ ՄԿԾ-ն յուրացրած մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու</p> <ul style="list-style-type: none"> <li>✓ մագիստրատուրայում՝ ստանալու այլ մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան,</li> <li>✓ ասպիրանտուրայում՝ ստանալով հետազոտողի որակավորում:</li> </ul>